

արեւելեան Հայաստանի մետաքսը հայերը կը կեդրոնացնէին Շամախ, ինչպէս Կիլիկիոյ մետաքսը ի Թաւրիզ, մեր Զուղայեցի վաճառականները զայն կը տանէին Հալէպ մետաքսի արտաձման գլխաւոր շուկան եւ շահաստանը, ուր ապրանքը կը բերուէր ծախուելու կամ փոխանակուելու, եւ ուր վեհեախիցիք կամ եւրոպացի ուրիշ գնորդներ գործակատարներ հաստատած էին:

Հում մետաքսի Հայ վաճառականները երեք տարբեր եւ գլխաւոր ուղիներ կը գործածէին մետաքսը Եւրոպա արտածելու համար: Ամենագլխաւորը Կովկասեան Հայաստանէն Թավրիզի վրայով Հալէպ անկից ալ Տրոպոլիս կամ Ալէքսանտրէզ (Իսթէնտէրուն) Միջերկրական ծովու Հայակիլիկեան փոքր նաւահանգիստները ուրիշ նաւերով ապրանքը գլխաւորաբար Վենետիկ կը տարուէր: Երկրորդ ուղին կարելի է սեպել Թաւրիզ-Կ. Պոլիս զիծը, ցամաքի ճանապարհը, վտանգաւոր, բողմածախ: Կ. Պոլսոյ հետ Զմիւռնիան ալ այս ճամբուն գլխաւոր արտաձման կէտն եղաւ: Իսկ երրորդ Կասպից ծովու վրայով Աստրախան, եւ Ռուսիոյ մէջով (Մոսկուայի դժով) Անգլիա կամ Հոլանտա կ'արտածուէր: Այս երեք ճամբաներուն ալ կը տիրապետէին Հայ վաճառականները:

Վեհեախիցի Vincentio D'Alessandri զեսպանը կը վկայէ, որ Պարսից Շահ Թահմասպի (1525-1576) մօտ գտնուած միջոցին ի Թաւրիզ, մետաքսը «ղեւ Կ. Պոլիս կը տարուի ցամաքի ճանապարհով՝ եւ անկէ կը տարուի Պոզտանիա (Մոլտավիա), տարածուելով Լե-

մոլեոանդի մը պատճառաւ նահատակուեցաւ հոն, թէեւ առեւտուան Շահն ալ քաղաքը անգուլթօրէն պատթեց: Յաւալի է որ շատ քիչ մանրամասնութիւն հասած է մեզի այս քաղաքներուն (Թաւրիզ, Սուլթանիէ, Գաշան, Արտէպիլ, Շամախի եւն.) հնազոյն հայ գաղութներուն մասին: Ծիծաղելի է մեր զիտցածը Պաղտատի, Համատանի, Պասրայի Հայութեանց մասին: Ինձի ծանօթ չէ նոյնիսկ Թիֆլիսի Հայութեան անցեալը ամփոփող հատոր մը, մինչ աչքի առջեւ եղած նիւթը կըրնայ հատորներ լեցնել:

հաստան, Տանիմաքա, Շուէտ եւ ուրիշ վայրեր, բայց ծախքերը այնքան խոշոր են, որ կարգ մը Հայեր, որոնց ծանօթացայ Թաւրիզի մէջ եւ յետոյ ալ Թրիփոլի մէջ հանդիպեցայ, ըսին որ վաճառականութիւնը դեռ անկման ճանապարհին վրայ կը գտնուի:»(1) Վենետիկցիին վկայութեան համաձայն, Հայերը մետաքս կ'արտածէին Պարսկաստանէն թէ ցամաքով Պարսկաստան-Պոլիս-Պալքաններ — Եւրոպա եւ թէ Պարսկաստան-Թրիփոլի-Վենետիկ կամ Լիվորնիա ճամբով Եւրոպա: Սակայն, հայերը կը գանդատէին առեւտուրի շարունակուող անկման համար:

Վենետիկցիէն տարիներ վերջ Անգլիացի մը՝ George Sandys կը վկայէր 1610-ին, որ հայերը աէր էին Կ. Պոլսոյ մետաքսի առեւտուրին: Անգլիացի վաճառականներ Կ. Պոլիս կուգային նաւերով, եւ «անոնք հոս կ'առնեն ինչ որ քանակութեամբ հում մետաքս, Պարսկաստանի գորգեր, հոնկէ ցամաքի ճանապարհով բերուած, Հայ վաճառականներու կողմէ»: (2) Գուցէ կրեանք ենթադրել, որ ար-

(1) Narrative of Italian Travels in Persia. — Trs. Charles Grey, 1873, London, էջ 225: Ըստ Nicholas Nicholay Daulphinos-ի, 1551ին Թաւրիզ Հայաստանի մաս կը կազմէր, դուցէ անոր համար որ հայերու մեծ թիւ մը կար հոն ուր անոնք աէր էին առեւտուրին: Այդ առեւտուրի մեծ առեւտուր ունէր «զանազան ապրանքներու, կերպասներու, ոսկեոյ, արծաթի եւ մետաքսի եւ ամէն տեսակ զոհարեղէններու եւ անթիւ վաճառականներ աշխարհի ամէն կողմէն հոն կ'երթան»: (A Coll. of Voy. and Trav.—Thos. Osborne, 1745, Vol. I p. 617) Անգլիացի John Newbery վաճառականը (1581) կը վկայէ, որ «Թաւրիզ կայ տեսակ մը մետաքս սաթին, աքլաս կոչուած, 9 կամ 10 դաղ երկար, կտորը կը ծախուի 3 ու կէս մառչիլի եւ լաւազոյնը 4 դուրուշի, որոնք լաւ ապրանքներ են Երզնկայի եւ Էրզուրումի համար, ի Հայաստան»: (Purchas his pilgrims, Vol. III, p. 468, edt. of 1905):

(2) A Relation of Journey. A. D. 1610. — London, 1627, p. 86: